



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՐԻՄՏԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱԴԵՏԷ Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Կիրակի, Ապրիլ 29 կը կոչուի՝ Կարմիր Կիրակի: Թեմիս բարեխնամ այս առիթով պիտի հանդիսապետէ Էնսինոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ Ս. Պատարագի արարողութեան եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը:

PRELATE TO PRESIDE OVER MASS AT HOLY MARTYRS CHURCH

On Sunday, April 29th, which is known as Red Sunday, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Holy Mass at Holy Martyrs Church in Encino and deliver the sermon.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՀՈՎԱՆԱԽՐԷ ՀՕՍ-Ի 100 ԱՄԵԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ

Հայ Օգնութեան Միութեան 100ամեակի նախասեմին, Կիրակի, Ապրիլ 29-ի երեկոյեան ժամը 5:30-ին, ճաշկերոյթ հանդիսութիւն մը տեղի պիտի ունենայ տաունթաունի Marriott պանդոկին մէջ: Ձեռնարկը կը վայելէ հովանաւորութիւնը Առաջնորդ Սրբազան Հօր, եւ կազմակերպուած է ՀՕՍ-ի 100ամեակի հիմնադրամի յանձնախումբին կողմէ: Գլխաւոր բանախօսն է՝ Անգլիոյ Լորտերու Պալատի անդամ Պարոնուհի Քարոլայն Քոքս:

Յայտնենք որ Շաբաթ, Ապրիլ 28ին ՀՕՍ-ի Շրջ. Վարչութիւնը թեյասեղանով մը պիտի պատուէ Պարոնուհի Քոքսի ներկայութիւնը: Ընդունելութիւնը տեղի պիտի ունենայ Շրջ. Վարչութեան կեդրոնատեղիին մէջ, Կլենտէյլ: Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ ընդունելութեան փոխանցելու իր օրհնութեան խօսքը:

PRELATE TO ATTEND A.R.S. GALA BANQUET

The Armenian Relief Society will kick off its 100th anniversary celebration on Sunday, April 29th, at the Downtown Marriott Hotel. The gala banquet, organized by the A.R.S. 100th Anniversary Fund Committee, is being held under the auspices of the

Prelate and features guest of honor the Honorable Baroness Caroline Cox of the British House of Lords.

On Saturday, April 28, the Prelate will attend a tea reception in honor of Lady Cox organized by the A.R.S. Regional Executive.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐբԱՉԱՆ ՀԱՅՐԸ ԱՅՑԵԼԵՑ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՍԱՀԱԿ-ՄԵՏՐՈՊ ՎԱՐԺԱՐԱՆ

Չորեքշաբթի, 25 Ապրիլի առաւօտուն, ընդառաջելով Վարժարանի տնօրէնութեան հրաւերին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան պաշտօնական այցելութիւն մը տուաւ Ալթատենա շրջանի Հայ Աւետ. Սահակ-Մետրոպ Վարժարանը: Առաջնորդ Սրբազան Հօր կ'ընկերանային Զրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեան եւ Ս. Սարգիս Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Խորէն Քիւնյ. Պապոշեան:

Վարժարանի մուտքին, Առաջնորդ Սրբազան Հայրը դիմաւորուեցաւ Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Հովիւ՝ Վերապատուելի Յովսէփ Մաթոսեանի, վարժարանի տնօրէն՝ Տիար Լեւոն Ֆիլեանի եւ վարժարանի անձնակազմին կողմէ:

Մտերմիկ հանդիպումէ մը ետք, ներկաները ուղղուեցան Վարժարանի հանդիսասրահ, ուր տնօրէնին բարի գալստեան խօսքէն ետք, ի պատիւ Առաջնորդ Սրբազան Հօր եւ հիւրերուն՝ գործադրուեցաւ հարուստ յայտագիր մը, կատարողութեամբ Նախակրթարանի աշակերտներուն: Յայտագրին երգուեցան շարականներ, հոգեւոր եւ հայրենասիրական երգեր, ինչպէս նաեւ արտասանուեցան սաղմոսներ եւ Ապրիլեան Նահատակաց յիշատակին ձօնուած բանաստեղծութիւններ:

Բեմ հրաւիրուեցաւ Առաջնորդ Սրբազանը, որ իր օրհնութեան, սրտի խոր գոհունակութեան եւ քաջալերանքի խօսքը ուղղեց տնօրէնութեան, ուսուցչական կազմին եւ աշակերտներուն, ինչպէս նաեւ յատուկ կերպով գնահատեց Վերապատուելի Մաթոսեանի սիրալիր գործակցութեան ոգին: Սրբազանը յայտնեց, որ այս յայտագրով աշակերտները եկան անգամ մը եւս ամբողջ աշխարհին յիշեցնելու ու յատկապէս թուրքին ցոյց տալու, որ հայ ժողովուրդը ողջ է ու հզօր իր նոր սերունդով, թէ՛ հայ ժողովուրդը երբեք պարտուիլ ու վհատիլ չի գիտեր, եւ յաւերժ կենդանի պիտի մնայ, մինչեւ այն ատեն որ Սահակ-Մետրոպ Նախահայրերու ոգին եւ հաւատքը մեր մէջ կը մնան միշտ վառ, մինչեւ այն ատեն որ հայ գիրը կը գրուի մեր մատներով ու լեզուն մեր շրթներուն վրայ կը բարբառի, մի՛շտ կանգուն պիտի մնայ հայ ժողովուրդը: Ապա Սրբազանը արտայայտեց իր շնորհաւորութիւնները տնօրէնին, ուսուցիչներուն եւ ուսանողներուն՝ տարուած աշխատանքին համար ու բարգաւաճում մաղթեց վարժարանին, եւ կոչ ուղղեց աշակերտներուն, որ իրենց ուսումով եւ նուիրուածութեամբ դառնան ջահակիրները Հայ հաւատքին ու հայ մշակոյթին, դառնան տիպար քաղաքացիներ իրենց կատարած ամէնօրեայ ուխտին եւ հաւատարիմ գաւակները Աստուծոյ եւ Հայ ազգին:

Յանուն Սահակ-Մետրոպ Վարժարանի մեծ ընտանիքին, շնորհակալութեան խօսք արտասանեց Վերապատուելի Յովսէփ Մաթոսեանը, յատկապէս շեշտելով

Առաջնորդ Սրբազան Հոր պատրաստակամութիւնը՝ ամէն առիթով իր ներկայութեամբ քաջալեր հանդիսանալով Հայ Աւետարանական համայնքի ձեռնարկներուն:

Ապա Սրբազան Հայրը պահպանիչով օրհնեց Սահակ-Մեսրոպ վարժարանի տնօրէնութիւնը, հոգաբարձութիւնը, ուսուցչական կազմը եւ ուսանողութիւնը: Հաւաքական «Հայր Մեր»ի երգեցողութենէն ետք, Սրբազան Հայրը իւրաքանչիւր աշակերտի տուաւ Զրիստոնէական Դաստիարակութեան Գրասենեակին կողմէ պատրաստուած պատկերազարդ երկլէզու աղօթքներ:

Սրբազանը նաեւ այցելութիւն մը շնորհեց մանկապարտեզի բաժինը, լսեց սիրասուն փոքրերուն աղօթքները, զրուցեց անոնց հետ եւ հայրական սիրով օրհնեց զանոնք ու անոնց աղօթքներ բաժնեց:

Պատշաճ հիւրասիրութենէ ետք՝ Սրբազանը հրաժեշտ տուաւ տնօրէնութեան եւ վարժարանի անձնակազմին:

PRELATE VISITS SAHAG-MESROB ARMENIAN CHRISTIAN SCHOOL

On the morning of Wednesday, April 25th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, paid an official visit to Sahag-Mesrob Armenian Christian School upon the invitation of Principal Levon Filian and the school administration. The Prelate was accompanied by Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian and Rev. Khoren Babochian, pastor of St. Sarkis Church in Pasadena.

Upon their arrival, the Prelate and delegation were greeted by Rev. Joe Matossian, Minister of the Armenian Evangelical Union of North America, the school principal and administration. Following a brief meeting, the Prelate headed to the assembly hall where a special program had been organized featuring elementary school students.

In his remarks the Prelate commended the cooperative spirit of Rev. Matossian and expressed gratitude to Mr. Filian, staff, and students for the program which beautifully demonstrated that the Armenian people are resilient and will stand strong as long as we keep the spirit of our forefathers alive through our language and culture. Furthermore, the Prelate urged the students to remain loyal children of God and of the Armenian nation and to stay true to their faith and heritage.

Rev. Joe Matossian expressed thanks to the Prelate on behalf of the school, emphasizing the Prelate's continuous support of and encouragement to the Armenian Evangelical community.

The assembly came to a close with a prayer by the Prelate followed by the collective singing of the Lord's Prayer, and the presenting of prayer cards to the students by the Prelate.

Prior to departing, the Prelate met with the kindergarten class where he offered his blessings to the students and also presented them with prayer cards.